Արձանագրություն

«ԱՐԳՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լանջանիստ բնակավայրի վարչական տարածքում Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /4-րդ լսում/

գ. Շաղափ **11.07.2024թ.**

2024 թվականի հուլիսի 3-ին, ժամը 15:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (գ.Շաղափ , Արարատյան 17) տեղի ունեցավ «ԱՐԳՈՄ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լանջանիստի՝ Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում (4-րդ լսում):

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ստեփանյանը , համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Ս.Կարապետյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Լանջանիստ բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Միրզոյանը և բնակիչներ, Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ.Առաքելյանը, «ԱՐԳՈՄ» ՍՊԸ –ի տնօրեն՝ Ս. Մկրտչյանը , աշխատակիցներ, ներկայացուցիչներ, և փորձագետ՝ Մ.Հարությունյանը, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Նելլի Նասիբյանը (մասնակիցների ամբողջական ցանկը կցվում է արձանագրությանը):

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն/ որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լանջանիստ բնակավայրի՝ Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում (4-րդ լսում):

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի

աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը և խոսքը փոխանցվեց վերջինիս:
Այնուհետ լսման պատասխանատուն խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Նելլի Նասիբյանին, վերջինս ներկայացրեց «ՇՄԱԳ» հաշվետվություն:

Այնուհետ, խոսքը փոխանցվեց բնապահպանական փորձագետ՝ Մ. Հարությունյանին, վերջինս հանդես եկավ հաշվետվությամբ:

Հաջորդիվ հարց հնչեցրեց համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վ. Ծատուրյանը.

Արդյո՞ք կունենաք սեփական ջրի աղբյուր.

Պատասխանեց փորձագետ՝ Մ. Հարությունյանը և Ընկերության տնօրեն՝ Ս. Մկրտչյանը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար Մ. Առաքելյանը.

Արդյոք Ձեր կողմից կարգավորվելու է ծանր բեռնատարների գերբեռնվածությունը և շարժման ուղին

Պատասխանեց փորձագետ՝ Մ. Հարությունյանը և Ընկերության տնօրեն՝ Ս. Մկրտչյանը, պատասխանը լիարժեք բավարարեց լսարանին:

Հաջորդիվ հարց հնչեցրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ստեփանյանը,

Արդյոք նախորդ լսումներին հնչեցվել են հուզող հարցեր և հարցերին տրվել է սպառիչ պատասխաններ.

Հարցին պատասխանեց Լանջանիստ բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Միրզոյանը այո բարձրացվել են հարցեր և ստացել սպառիչ պատասխաններ:

Հաջորդիվ հարց հնչեցրեց համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը.

1. Հանքավայրի հեռավորությունը Լանջանիստ և Շաղափ բնակավայրերից:

2.Կենսաբազմազանության ուսումնասիրություն արդյոք կատարվել է հանքավայրի տարածքում թե ոչ:

3. Փոշեպաշտպան անտառաշերտի հիմնում:

Հարցին պատասխանեց ընկերության փորձագետ՝ Մ. Հարությունյանը տալով սպառիչ պատասխան:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքներն ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «ԱՐԳՈՄ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լանջանիստ բնակավայրի Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկմանը /4-րդ լսում/ :

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավար՝ / / Գ. Սարգսյան

Ձեռնարկող՝ «ԱՐԳՈՄ»» ՍՊԸ -ի տնօրեն՝ / / Ս. Մկրտչյան

Վարող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ԱՐԳՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի արդունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (գյուղ Շաղափ, Արարատյան 17) 03.07.2024թ. տեղի ունեցած հանրային քննարկումների /4-ին փուլ/

գ. Շաղափ **03.07.2024թ.**

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	գ. [illegible]	
9.	[illegible]	գ. [illegible]	
10.	[illegible]	գ. [illegible]	
11.	[illegible]	գ. [illegible]	
12.	[illegible]	գ. [illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	գ. [illegible]	
15.	[illegible]	գ. [illegible]	
16.	[illegible]	գ. [illegible]	
17.	[illegible]	գ. [illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	